ՍԵԴՐԱԿ ՍԵԴՐԱԿՅԱՆ
Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի ռեկտոր, հոգեբանական գիտությունների դոկտոր
ՆՈՒՆԵ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ
«Ուրարտու» համալսարանի գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի դասախոս

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հոդվածում ներկայացված են ծնողների իրենց հատուկ կարիքներով երեխաների նկատմամբ վերաբերմունքի էմպիրիկ հետազոտության արդյունքները: Ցույց է տրվում, որ ծնողների հետ հոգեբանական աշխատանքը մեծապես նպաստում է այդ երեխաների զարգացմանը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ ներառական կրթություն, հատուկ կարիքներով երեխաներ, հանրակրթական դպրոց, ծնողական վերաբերմունք, ինքնավերաբերմունք, անձի ինքնագնահատական:

Դեռևս ոչ վաղ անցյալում Հայաստանում հատուկ կարիքներով երեխաներն ուսանում էին միայն իրենց խնդիրների համար նախատեսված հատուկ կրթական հաստատություններում: Ներկայումս ուրախությամբ կարող ենք նշել, որ մեր երկրում ներառական կրթական համակարգի ներդրման շնորհիվ հատուկ կարիքներով երեխաները կարող են հաճախել նաև հանրակրթական դպրոց, սովորել իրենց հասակակիցների հետ հավասար պայմաններում՝ չտարանջատվելով և չմեկուսանալով ընտանիքից, ընկերներից և ողջ հասարակությունից: Ներառական կրթության կարևորագույն առավելություններից մեկն այն է, որ հատուկ կարիքներով երեխայի ընտանիքն իր անմիջական մասնակցությունն է ունենում երեխայի անձի ձևավորման և կրթության կազմակերպման գործընթացում:

Փորձը ցույց է տալիս, որ ներառական կրթություն ստացող հատուկ կարիքներով երեխաների հաջողությունները կախված են ոչ միայն երեխայի ընդունակություններից, զարգացման հնարավորություններից, կրթական գործընթացում ներառված մասնագետների որակավորումից, այլ նաև ծնողի՝ իր երեխայի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, սպասումներից և դիրքորոշումից: Ուստի կարևոր է դառնում գնահատել ծնողների դերը ներառական կրթության արդյունավետության վրա:

Մեր կողմից իրականացվել է փորձարարական հետազոտություն՝ ժամանակակից միջուկային հայ ընտանիքներում հատուկ կարիքներ (հաշմանդամություն) ունեցող երեխաների նկատմամբ ծնողական վերաբերմունքի սոցիալ–հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրման նպատակով: Հետազոտությունն անց է կացվել 2013–2014 թվականների ընթացքում, Երևան քաղաքում ապրող, Ֆիլանտրոպ ԲՀԿ–ի կենտրոն հաճախող նախադպրոցական և դպրոցական տարիքի հատուկ կարիքներ ունեցող 76 երեխաների 152 ծնողների հետ: Հատուկ կարիքներ ունեցող երեխայի նկատմամբ ծնողների վերաբերմունքն ուսումնասիրելու նպատակով կիրառել ենք Ա. Յա. Վարգայի և

Վ. Վ. Ստոլինի «Ծնողական վերաբերմունքի թեստ-հարցարանը» [4, էջ 144] և «PARI» մեթոդիկան՝ ըստ Ե. Ս. Շեֆերի և Ռ. Կ. Բելի [4, էջ 130]:

Ծնողական վերաբերմունքի թեստ-հարցարանի կիրառումից ստացված արդյունքներից պարզվեց, որ հետազոտությանը մասնակցած ծնողների մոտ իրենց հատուկ կարիքներ ունեցող երեխաների նկատմամբ վերաբերմունքում գերակշռում է հուզական մերժողականությունը (68,4%), միջինից ցածր համագործակցությունը (56,6%), ավտորիտար վերահսկողությունը (59,9%), իրենց երեխայի ընկալումը որպես §փոքրիկ անհաջողակի¦ (73%): Ստացված արդյունքները վկայում են, որ այս ծնողները չեն վստահում իրենց հատուկ կարիքներ ունեցող երեխաներին, չեն հավատում նրանց հաջողություններին, ձգտում են հետ պահել նրանց կյանքի դժվարություններից, խիստ վերահսկողություն են սահմանում գործողությունների վրա՝ զրկելով երեխային ինքնուրույնությունից: Բացի այդ հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ծնողների մեծ մասը չի ընդունում, հուզականորեն մերժում է իր երեխային, չի հարգում նրա անհատականությունը համարում է նրան վատը և չի համակրում նրան: Այս ծնողները գտնում են, որ իրենց երեխաները՝ ցածր ընդունակություններով, զարգացման խանգարումների ակնհայտ սահմանափակումներով և արատներով, ոչ մի հաջողության չեն կարող հասնել, համարում են նրանց անկարողունակ, անհաջողակ և խուսափում են նրանց հետ համագործակցելուց: «Ընդունում – մերժում» սանդղակի տվյալները, որոնք արտահայտում են ծնողի ինտեգրալ հուզական վերաբերմունքը երեխայի նկատմամբ, ցույց են տալիս, որ հետազոտված ծնողներից միայն 18,4%-ն (28-ը) է ընդունում իր երեխային այնպես, ինչպես որ կա, հարգում նրա անհատականությունն ու համակրում նրան:

Մայրերի մոտ գերակշռում է սիմբիոտիկ կապը երեխայի հետ (67,1%), միջինից թույլ համագործակցությունը (86,67%), մեծամասամբ (67,1%) երեխային համարում են §փոքրիկ անհաջողակ¦, և հիմնականում դրսևորում են ավտորիտար վերահսկողություն (63,15%): Մայրերի 64,5 %-ը հուզականորեն մերժում է իր հատուկ կարիքներ ունեցող երեխային: Մայրերի նույնականացումը երեխայի հետ (սիմբիոզը) և միևնույն ժամանակ այդ երեխայի հուզականորեն մերժումը խոսում է ինքն իր նկատմամբ ունեցած վերաբերմունքի, տվյալ դեպքում ինքնամերժման և ցածր ինքնագնահատականի մասին: Հայրերի մոտ ընդգծված է բարձր մերժողականությունը (72%), համագործակցությունից հրաժարումը (67,1%), հոգեբանական չափից ավելի հեռավորությունը (50%), ավտորիտար վերահսկողությունը (56,6%) և երեխային որպես §փոքրիկ անհաջողակի¦ ընկալումը (80,3%):

«PARI» մեթոդիկայի միջոցով կատարված հետազոտության արդյունքում պարզվեց, որ մայրերը (86%) հայրերի (90,8%) հետ գրեթե հավասարապես գտնում են, որ իրենց հատուկ կարիքներ ունեցող երեխային վերաբերող ամեն հարցում ծնողը պետք է ցուցաբերի գերիշխանություն: Երկու կողմն էլ ունենալով թելադրող վերաբերմունք երեխայի նկատմամբ՝ ոչ մի կերպ չեն նպաստում նրանց մոտ ակտիվության զարգացմանը, ընդհակառակը՝ ճնշում են երեխայի ազատության ու ինքնաարտահայտման դրսևորումները: Հարցված մայրերից միայն 9-ը (11,8%) և հայրերից 4-ը (5,3%) ունեն համագործակցող հարաբերություններ իրենց երեխաների հետ: Թե՛ մայրերի և թե՛ հայրերի դիրքորոշումը նույնն է այն հարցում, որ ծնող-երեխա հարաբերությունները չեն կարող հավասար լինել. ծնողը միանշանակ պետք է իշխող դեր ունենա: Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ չափից ավելի խստության դրսևորմումները հայրերի մոտ գերա-

զանցում են մայրերի խստության դրսևորումներին. չափից ավելի խստության դրսևորում գրանցվել է մայրերի 39,5%–ի և հայրերի 42,1% –ի մոտ: Հայրերն ավելի շատ են խուսափում իրենց հատուկ կարիքով երեխայի հետ շփվելուց (36,8%), քան մայրերը (22,3%), ինչը բացատրվում է նրանով, որ մայրը, լինելով հատուկ կարիքներով երեխայի հիմնական խնամատարը, կամա թե ակամա, շփման մեջ է նրա հետ: Մայրերը, ի տարբերություն հայրերի, չափազանց շատ են միջամտում երեխայի կյանքին (59,2%՝ բարձր և 26,3%՝ միջին ցուցանիշներ), մինչդեռ հայրերը գրեթե մասնակցություն չունեն և անտարբեր են իրենց հատուկ կարիքներով երեխայի հետաքրքրությունների նկատմամբ:

Երեխայից չափից ավելի հուզական հեռավորություն բնութագրող ցուցանիշներից է նաև ծնողների դյուրաբորբոքությունը: Ստացված արդյունքները (80 ծնողների մոտ՝ առավելագույն և բարձր, 56–ի մոտ՝ միջին ցուցանիշներ) ցույց են տալիս, որ երկու սեռի ծնողների մոտ էլ դյուրաբորբոքությունը բարձր է, քանի որ նրանք արդարացնում են իրենց՝ նույնիսկ չնչին մանրուքից երեխային հորդորելն ու պատժելը և համակարծիք են, որ խիստ դաստիարակության և կարգուկանոնի դրսևորումը երեխային հաջողության հասցնելու միակ հնարավոր, արդարացված ուղին է: Ինքնաարտահայտման և կամքի ճնշման ևս մեկ դրսևորումներից է ծնողների կողմից երեխայի ագրեսիվության ճնշումը (71 ծնողներ), ինչը ևս մեկ անգամ փաստում է ծնողի կողմից երեխայի ազատության արտահայտման ճնշման մասին: Ծնողը նախընտրում է միանգամից նախատել երեխային, անմիջապես թելադրել իր կարծիքով տվյալ իրավիճակի ճիշտ լուծման տարբերակը՝ գտնելով, որ դա տեղին է հատկապես «հիվանդ» երեխայի պարագայում:

Ծնողական նման վերաբերմունքը ոչ միայն չի նպաստում երեխայի անձի ձևավորմանը, ուսման մեջ հաջողություններին, այլև խոչընդոտում է նրա ընդունակությունների բացահայտմանն ու դրանց հնարավոր զարգացմանը: Այս երեխաները ժամանակի ընթացքում դառնում են պարփակված, անինքնավստահ, թերհավատ իրենց ապագա հաջողությունների հանդեպ: Ամենամոտ մարդկանց, ընտանիքի կողմից իրեն տրված գնահատականը երեխան ընդունում է որպես սեփական ինքնագնահատական, որով էլ պայմանավորված է, թե հատուկ կարիքներով երեխան իրեն կընկալի որպես հաշմանդամ, կյանքում ինչ–որ բանի հասնելու անընդունակ, անկարողունակ, թե՝ որպես ինքնուրույն, յուրօրինակ անձնավորություն, որը կյանքում ունի իր ճանապարհը և կարող է ձևավորել իր հաջող կենսագրությունը:

Անձի ինքնագնահատականի ձևավորման մասին խոսելիս՝ Կ. Ռոջերսը նշում է, որ փոքր երեխաների մոտ ինքնագնահատականը ենթագիտակցական է, այն ավելի շատ ինքնացգացողություն է, քան ինքնագնահատական: Երեխաներն ավելի ուշ տարիքում են սկսում հասկանալ իրենց, իրենց ձգտումներն ու ընդունակությունները և կառուցել սեփական կյանքը՝ իրենց իսկ մասին ունեցած գիտակցված գնահատականին համապատասխան: Ռոջերսի գաղափարներն այն մասին, թե ինչպիսին պետք է լինեն փոխհարաբերությունները ծնողների և երեխաների միջև, հիմք հանդիսացան ճանաչված գիտնական Բ.Սպոկի աշխատանքների համար, որը գրում էր այն մասին, որ ծնողները պետք է խնամեն իրենց երեխաներին՝ չխախտելով նրանց իրական ինքնագնահատականը և օգնեն նրանց սոցիալիզականացմանը [3, էջ 394]:

Մեր հետազոտություններից պարզեցվեց նաև, որ հատուկ կարիքներով երեխայի նկատմամբ ընտանիքի բացասական վերաբերմունքն ուղղակիորեն կախված է նրանց ծնողների ցածր ինք-

նագնահատականից: Ինքնագնահատականի արագ ախտորոշման մեթոդիկայի [5, էջ 53], «Ընտանեկան սոցիոգրամը» [1, էջ 173] մեթոդի, հոգեբանական զրույցի և դիտման կիրառումը մեզ հնարավորություն տվեց որոշելու հատուկ կարիքներով երեխաներ ունեցող ամուսնական զույգերի ինքնագնահատականները, դրանց միջև գոյություն ունեցող կապը, պարզելու ներընտանեկան փոխհարաբերությունները, հասկանալու, թե ընտանիքում ում դերը և իրենց հատուկ կարիքներով երեխայի հանդեպ ամուսիններից որի դիրքորոշումն է գերակայող:

Հետազոտությունից ստացված արդյունքները ցույց են տալիս, որ հատուկ կարիքներով երեխաների ծնողների (80%) մոտ գերակշռում է ոչ ադեկավատ ինքնագնահատականը, միչդեռ հայտնի է, որ եթե համարժեք ինքնագնահատականը հանգեցնում է հոգեկան ներդաշնակության և ապահովում է գիտակցված ինքնավստահություն, ապա ոչ համարժեք ինքնագնահատականը հանգեցնում է ներանձնային կամ միջանձնային բախումների: Ընդ որում, զրույցների արդյունքում պարզեցինք, որ չնայած հատուկ կարիքներով երեխա ունեցող ընտանիքում և՛ մոր, և՛ հոր ինքնագնահատականը ցածր է, սակայն ծնողներից մեկի՝ հիմնականում հոր ցածր ինքնքգնահատականով էր պայմանավորված մյուս ծնողի՝ մոր ցածր ինքնագնահատականը, անինքնավստահությունը սեփական ուժերի, կյանքում ինչ–որ բան փոխելու և իր իսկ հնարավորությունները ռեալ գնահատելու կարողությունը: *Զրույցի և դիտման* արդյունքները վկայում են, որ հայրերի մոտ ցածր ինքնագնահատականի դրսևորումները, մայրերի հետ համեմատած, այլ են: Ցածր ինքնագնահատակ ունեցող մայրերը մշտապես լարված են, դյուրաբորբոք, անինքնավստահ, անվերջ կարիք ունեն մերձավորի[a] հիմնականում ամուսնու կողմից քաջալերանքի, դժգոհ են իրենց արտաքին տեսքից, թերագնահատում են իրենց՝ ուրիշների հետ համեմատություններում, նրանց ուղեկցում է չհասկացված լինելու զգացողությունը, անընդհատ տագնապի մեջ են, որ շուտով ինչ–որ վատ բան կարող է պատահել իրենց հետ: Իսկ հայրերի մոտ ինքնագնահատականի ցածրությունը երևում է երեխայի խնդրի մեղքը կնոջ վրա բարդելու, երեխային մերժելու, նրա նկատմամբ պատասխանատվությունից հրաժարվելու, նրա հետ շփումից խուսափելու, հասարակության մեջ նրա հետ ներկայանալը բացառելու, հասարակության կարծիքից ամոթի, §հեղինակության և անվան արատավորման¦ վախի դրսևորումների մեջ: Նրանք երեխայի հիվանդության պարագան համարում են իրենց կյանքում հանդիպող ցանկացած անհաջողության պատճառը: Ունենալով ցածր ինքնագնահատական, նրանք ձգտում են իրենց §հեղինակությունը¦ բարձրացնել ընտանիքում, ինչը շատերի կողմից արվում է կոնֆլիկտներ հրահրելով, մշտական դժգոհություններով, կնոջն ու հատուկ կարիքներով երեխային նսեմացնելով, նրանց իր կամքը թելադրելով՝ պահպանելու համար ընտանիքում իրենց գերիշխանությունը որպես տան գլխավորի: Զույգերի հետ *զրույցները* ցույց են տալիս, որ հայրերի ցածր ինքնագնահատականը ուղղակիորեն ազդում է մայրերի անինքնավստահության, ընտանիքում անինքնուրույնության զգացողության վրա: Հայրը, հիմնականում լինելով ապրուստի և նյութական միջոցների միակ ապահովողը, մնում է ընտանիքի գլխավորը, և նրա կարծիքը թելադրող է մնում ընտանիքում, այդ թվում նաև խնդրահարույց երեխայի նկատմամբ մերժողական վերաբերմունքի ու բացասական դիրքորոշման վերաբերյալ: Մայրերի գերակշիռ մասը (89%) պնդում է, որ ինչ էլ ասեն, միևնույն է, վերջում արվում է այնպես, ինչպես ճիշտ են համարում իրենց ամուսինները: Այս արդյունքնե-

ը վկայում են, որ հատուկ կարիքներով երեխաներ ունեցող ժամանակակից միջուկային հայ ընտանիքներում հայրերը գերիշխող դիրք են գրավում, որ ընտանիքում խնդրով երեխայի առկայությունը առավել բարձրացնում է հայրերի գերիշխողականությունը: Նրանք չեն գիտակցում, որ գերիշխանություն և գերխնամք տածելով նրանք վնասում են երեխային՝ հոգեպես և ֆիզիկապես, թույլ չտալով զարգանալ ներդաշնակ և ինքնուրույն անձ: Վնասվում են նաև միջամուսնական հարաբերությունները, որոնք ուղեկցվում են երկկողմ մեղադրանքներով, և խաթարվում է ընտանիքի հոգեբանական մթնոլորտը:

Եթե երեխան ընտանիքում ցանկալի չէ, չեն բավարարվում նրա սիրո, քմբշանքի, հուզական շփման պահանջմունքները, եթե նա ներքին անհանգստություն է ապրում, ապա երեխայի անձի զարգացումը հապաղում է: Զարգացման ընթացքի վրա բացասաբար է ազդում նաև խթանիչների աղքատիկությունը, շրջապատող միջավայրի միօրինակությունը: Երեխայի հոգեկանի նորմալ զարգացման կարևոր նախադրյալ են նրա նկատմամբ ծնողների սերը, ընտանեկան բարենպաստ մթնոլորտը, բարեկամական հարաբերությունները [2, էջ 171]: Ս. Լ. Ռուբինշտեյնի համոզմամբ՝ երեխայի զարգացումը պահանջում է դաստիարակի մշտական զարգացում, որը հանդիսանում է երեխայի զարգացման պայման: Այստեղից հետևում է, որ ընտանիքում դաստիարակությունը պետք է սկսվի ծնողի դաստիարակությունից, ինքնադաստարակումից և ինքնակրթությունից: Նրանք ոչ միայն պետք է իմանան, թե ինչպես խնամեն երեխային , այլ նաև կողմնորոշվեն, թե ինչպես զարգացնեն երեխայի հոգեկանը և ձևավորեն որպես անձնավորություն [2, էջ 173]:

Որքան էլ մեծ լինի մասնագետների, դասընկերների և, առհասարակ, հասարակության կողմից հատուկ կարիքներ ունեցող երեխաների նկատմամբ ընդունող, սոցիալապես ցանկալի վերաբերմունքը, եթե երեխան իր համար ամենանշանակալից միջավայրից՝ ընտանիքից, ամեն օր դուրս է գալիս «անկարողունակ», «անպիտան էակի» զգացողությամբ, դժվար թե ուրիշների հետ համեմատության մեջ կարողանա ինքնադրսևորվել, պահպանել իր ինքնահարգանքը, ուժ գտնել մրցակցելու հասակակիցների հետ՝ իր «անհավասար հնարավորություններով»:

Այստեղից ակնհայտ է դառնում, թե որքան մեծ է ծնողի ազդեցությունը ներառական կրթության արդյունավետության վրա: Հատուկ կարիքներով երեխայի կրթության գործընթացը գործնականում մի շարք խնդիրներ է առաջադրում այս բնագավառում աշխատող տարբեր մասնագետների (հատուկ մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող և այլն) առջև, որտեղ առաջնահերթ ուշադրություն պետք է դարձնել նման երեխաների նկատմամբ նրանց ծնողների վերաբերմունքին և դիրքորոշմանը: Ներառական կրթության համակարգում գործող հոգեբանական ծառայության մեջ հատուկ տեղ պետք է հատկացնել ծնողների հետ հոգեբանական վերականգնողական աշխատանքներին և ծնողների մոտ անձնային աճի, ինքնավերաբերմունքի և ինքնագնահատականի կարգավորման արդյունքում նրանց մոտ ձևավորել դրական, հուզականորեն ընդունող վերաբերմունք իրենց հատուկ կարիքներ ունեցող երեխաների նկատմամբ, որից մեծապես կախված է երեխայի ինքնաընդունումը, հավատը սեփական ուժերի նկատմամբ և ինքնակայացումը: Այսպիսով, պարզ է դառնում, որ հատուկ կարիքներ ունեցող երեխայի նկատմամբ ծնողական վերաբերմունքից մեծապես կախված է ներառական կրթության արդյունավետությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սեդրակյան Ս. Ա., Ընտանիքի հոգեբանություն (Մեթոդաբանական վերլուծություն), Երևան: «Ուրարտու» համալսարան, 2010–456 էջ:
2. Акатов Л. И. Психологические основы социальной реабилитации детей с ограниченными возможностями жизнедеятельности / М–во труда и социал. развития Рос. Федерации и др. — М.: Просвещение, 2002. — 448 с.
3. Марцинковская Т. Д. История психологии: Учеб. пособие для студентов высш. учеб. заведений. – М.: Издательский центр Академия 2001; 2002. – 544 с.
4. Психологические тесты /под ред. А. А. Карелина: В 2 т. М.: Владос, 2001,Т. 2. –248 с.
5. Фетискин Н. П., Козлов В. В, Мануйлов Г. М. Социально–психологическая диагностика развития личности и малых групп. – М., Изд–во Института Психотерапии. 2002.

ВЛИЯНИЕ РОДИТЕЛЬСКОГО ОТНОШЕНИЯ К ДЕТЯМ С ОСОБЫМИ НУЖДАМИ НА ЭФФЕКТИВНОСТЬ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ

СЕДРАКЯН СЕДРАК

Доктор психологических наук,
ректор университета “Урарту”

МНАЦАКАНЯН НУНЭ

Преподаватель университета “Урарту”

В статье на основе экспериментального материала рассматриваются проблемы влияния родительского отношения к детям с особыми нуждами, его значение на развитие личности ребенка, а также его социализации особенно в инклюзивном образовании. Это стало бы более эффективным, если у родителя, выработалось положительное и приемлемое отношение к ребенку с особыми нуждами. В статье говорится о том, что психологические работы, проводимые с родителями, приводят к их уверенности в себе, личностному развитию и адекватной самооценке. Отношение родителя к ребенку с особыми нуждами зависит от упомянутых выше факторов. Все это положительно повлияет на эффективность инклюзивного образования.

THE IMPACT OF PARENTIAL ATTITUDE TOWARDS THE CHILDREN WITH SPECIAL NEEDS ON THE EFFECTIVENESS OF THE INCLUSIVE EDUCATION

SEDRAK SEDRAKYAN

Rector of “Urartu” University, Doctor of Psychology

NUNE MNATSAKANYAN

Lecturer of Practical Psychology and Sociology at “Urartu” University

On the basis of experimental material the article touches upon the problems of the impact of parental attitude towards the children with special needs, its importance on the development of person as well as its socialization especially in inclusive education. It would become more effective if the parent shows positive and kind attitude towards the child with special needs. It is mentioned in the article that psychological help carried out with parents will lead to their self–confidence, personal development and adequate self–esteem. The attitude that the parent shows toward a child with special needs depends of the above mentioned factors. These all will increase the effectiveness of inclusive education.